ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 12.03.2019թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ

թիվ ՍՑ-ԷՍ-2019/44

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ)՝ ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 20.02.2019թ. թիվ 01.1/26-3/2580-19 գրությամբ Արման Ասմանգուլյան Ա/Ձ-ին (այսուհետ՝ Ա/Ձ) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեց հետևյալը.

1. **<u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ պաշտպանության նախարարության (այսուհետ՝ նաև Պատվիրատու) 12.02.2019թ. թիվ ԴՎԱ/555 գրության հիման վրա, 20.02.2019թ.. Արման Ասմանգուլյան Ա/Ձ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքեր:

2. **<u>ՀՀ պաշտպանության նախարարության ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>**

ՀՀ պաշտպանության նախարարությունը 12.02.2019թ. թիվ ԴՎԱ/555 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնելով հետևյալը.

«Հիմք ընդունելով ՀՀ պաշտպանության նախարարության և Արման Ասմանգուլյան Ա/Ձ-ի միջև 01.06.2018թ. կնքված N ԳՀԾՁԲ-4/2-1 ծածկագրով պայմանագրի 2.1.3 կետի «բ» ենթակետը՝ ՀՀ պաշտպանության նախարարությունը 2019թ. փետրվարի 6-ին միակողմանի լուծել է N ԳՀԾՁԲ-4/2-1 պայմանագիրը:

Միաժամանակ տեղեկացնում եմ, որ վերոնշյալ պայմանագրի լուծման վերաբերյալ գրությունը 08.02.2019թ. հրապարակվել է www.gnumner.am կայքում»:

ՀՀ պաշտպանության նախարարությունը պատշաճ ծանուցվել է Բողոքներ քննող անձի կողմից հրավիրված նիստերի ժամանակացույցի վերաբերյալ, սակայն նախարարության կողմից լիազորված որևէ ներկայացուցիչ չի ներկայացել:

3. **<u>Արման Ասմանգուլյան Ա/Ձ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>**

Բողոքներ քննող անձը 20.02.2019թ. գրությամբ դիմել է Արման Ասմանգուլյան Ա/Ձ-ին՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 20.02.2019թ. թիվ 01.1/26-3/2580-19 գրությամբ նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել Ա/Ձ-ի գրավոր կարծիքը, սակայն վերջինիս կողմից որևէ գրավոր կարծիք չի ներկայացվել:

Արման Ասմանգուլյան Ա/Ձ-ն պատշաճ ծանուցվել է Բողոքներ քննող անձի կողմից հրավիրված նիստերի ժամանակացույցի վերաբերյալ, սակայն Ա/Ձ-ի կողմից լիազորված որևէ ներկայացուցիչ չի ներկայացել:

4. **<u>ՍՑ-ԷՍ-2019/44 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը, Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.</u>**

Բողոքներ քննող անձն ուսումնասիրել է ՀՀ ֆինանսների նախարարության 20.02.2019թ. թիվ 01.1/26-3/2580-19 գրությունը, ՀՀ պաշտպանության նախարարության 12.02.2019թ. թիվ ԴՎԱ/555 գրությունը և կից փաստաթղթերը, ՀՀ պաշտպանության նախարարության և Արման Ասմանգուլյան Ա/Ձ-ի միջև 01.06.2018թ. կնքված N ԳՀԾՁԲ-4/2-1 ծածկագրով պայմանագիրը, Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքների վերաբերյալ 16.01.2019թ. թիվ 1 եզրակացությունը, ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ՏԱ վարչության պետի կողմից 05.02.2019թ. ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալին ուղղված թիվ 151 գրությունը, Պատվիրատուի կողմից 08.02.2019թ. Արման Ասմանգուլյան Ա/Ձ-ին ուղղված թիվ ԴՎԱ/504 գրությունը.

ՀՀ պաշտպանության նախարարության և Արման Ասմանգուլյան Ա/Ձ-ի միջև 01.06.2018թ. կնքվել է N ԳՀԾՁԲ-4/2-1 ծածկագրով պայմանագիր (այսուհետ՝ նաև Պայմանագիր):

Պայմանագրի՝

- 1.1 կետի համաձայն՝ Կատարողը ստանձնում է ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ նաև ծառայություն)՝ համաձայն նույն պայմանագրի N1 հավելվածով սահմանցած Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով պահանջների:
- 1.2. կետի համաձայն՝ ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներում:
- 2.1.3 կետի «բ» ենթակետի համաձայն՝ Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝ խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:
- 7.9 կետի համաձայն՝ Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն, հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կապալառուն,

պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, նույն կետում նշված կայքում հրապարակվելուն հաջորդող օրվանից:

- Գնման ժամանակացույց թիվ 1 հավելվածի համաձայն՝ Ընկերությունը պարտավորվել է 2018թ. 4-րդ եռամսյակում (բայց ոչ ուշ քան 10.12.2018թ.) մատակարարել թվով 200 հատ ձեռնարկների և բրոշյուրների տպագրման ծառայություն, այդ թվում մարտական մեքենաների վարման կանոնների հրահանգ:

Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքների վերաբերյալ 16.01.2019թ. թիվ 1 եզրակացությամբ արձանագրվել է հետևյալը.

«N ԳՀԾՁԲ-4/2-1 ծածկագրով պայմանագրով հաստատված ժամանակացույցի 4-րդ եռամսյակում (բայց ոչ ուշ քան 10.12.2018թ.) պետք է մատուցվեր 200 հատ ձեռնարկների և բրոշյուրների տպագրման ծառայություն, սակայն Արման Ասմանգուլյան Ա/Ձ-ի կողից ծառայությունը չի մատուցվել:

Հիմք ընդունելով հետևյալը տալիս եմ բացասական եզրակացություն:»:

ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ՏԱ վարչության պետը 05.02.2019թ. թիվ 151 գրությամբ ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալին հայտնել է հետևյալը.

«Հայտնում եմ, որ ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար Արման Ասմանգուլյան Ա/Ձ-ի հետ 01.06.2018թ. կնքված N ԳՀԾՁԲ-4/2-1 ծածկագրով գնման պայմանագիրը չի կատարվել: Պատասխանատու ստորաբաժանումը ներկայացրել է բացասական եզրակացություն 200 հատ «մարտական մեքենաների վարման կանոնների հրահանգ»-ի ռուսերենից թարգմանման և տպագրման ծառայության վերաբերյալ:

Խնդրում եմ Ձեր հանձնարարականը ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ԳՓՁ վարչությանը՝ լուծել Արման Ասմանգուլյան Ա/Ձ-ի հետ 01.06.2018թ. կնքված N ԳՀԾՁԲ-4/2-1 ծածկագրով գնման պայմանագիրը, հիմք ընդունելով վերոնշված պայմանագրի 2.1.3 կետի պահանջները:»:

ՀՀ պաշտպանության նախարարությունը 08.02.2019թ. թիվ ԴՎԱ/504 գրությամբ Արման Ասմանգուլյան Ա/Ձ-ին հայտնել է հետևյալը.

«ՀՀ պաշտպանության նախարարության և Արման Ասմանգուլյան Ա/Ձ-ի միջև 01.06.2018թ. կնքված N ԳՀԾՁԲ-4/2-1 գնման պայմանագրի (այսուհետ՝ նաև Պայմանագիր) շրջանակներում Արման Ասմանգուլյան Ա/Ձ-ն 4-րդ եռամսյսակի ընթացքում պետք է

մատուցեր ձեռնարկների և բրոշյուրների տպագրման ծառայություն, սակայն նշված ծառայությունները չեն մատուցվել:

Հիմք ընդունելով վերոնշյալ պայմանագրի 2.1.3 կետի «բ» ենթակետը՝ ՀՀ պաշտպանության նախարարությունը 2019թ. փետրվարի 6-ին միակողմանի լուծել է N ԳՀԾՁԲ-4/2-1 գնման ծածկագրով պայմանագիրը:

Տեղեկացնում եմ, որ Արման Ասմանգուլյան Ա/Ձ-ից ենթակա է գանձնման 65.400 ՀՀ դրամ, որպես տուժանք՝ պայմանագրի կատարման ապահովում (պայմանաագրի ընդհանուր գումարի տաս տոկոսը):»:

Միաժամանակ ՀՀ պաշտպանության նախարարությունը N ԳՀԾՁԲ-4/2-1 ծածկագրով գնման պայմանագիրը լուծելու մասին հայտարարությունը 08.02.2019թ. հրապարակել է www.procurement.am կայքում:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

Օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ պայմանագրից հրաժարվելը թույլատրվում է օրենքով կամ կողմերի համաձայնությամբ, պայմանագիրը համապատասխանաբար համարվում է լուծված կամ փոփոխված:

Գնումների մասին» ՀՀ օրենքի՝ 2-րդ հոդվածի՝ 23-րդ կետի համաձայն՝ գնման գործընթացը գնում կատարելու նպատակով գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված ընթացակարգերի, իրավունքների և պարտականությունների իրագործմանն ուղղված գործողությունների ամբողջությունն է, ներառյալ գնումների պլանավորումը, գնման առարկայի բնութագրերի հաստատումը, պայմանագրի կատարումը և կառավարումը:

- 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից

պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

- 6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների բողոքարկման խորհրդում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը նույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին նույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ.

- ՀՀ պաշտպանության նախարարության և Արման Ասմանգուլյան Ա/Ձ-ի միջև 01.06.2018թ. կնքվել է N ԳՀԾՁԲ-4/2-1 ծածկագրով պայմանագիր:
- N ԳՀԾՁԲ-4/2-1 ծածկագրով պայմանագրի գնման ժամանակացույց թիվ 1 հավելվածի համաձայն՝ Ընկերությունը պարտավորվել է 2018թ. 4-րդ եռամսյակում պետք է մատուցեր 200 հատ ձեռնարկների և բրոշյուրների տպագրման ծառայություն:
- Արման Ասմանգուլյան Ա/Ձ-ի կողմից Պայմանագրով նախատեսված ծառայությունը չի մատուցվել:
- ՀՀ պաշտպանության նախարարությունը 06.02.2019թ. միակողմանի լուծել է N ԳՀԾՁԲ-4/2-1 ծածկագրով գնման պայմանագիրը:

Բողոքներ քննող անձը գտնում է, որ Արման Ասմանգուլյան Ա/Ձ-ն սահմանված ժամկետում Պայմանագրով նախատեսված ծառայությունը չմատուցելով՝ խախտել է 01.06.2018թ. կնքված N ԳՀԾՁԲ-4/2-1 ծածկագրով պայմանագրի 1.1 կետով ստանձնած պարտավորությունը, ինչը հանգեցրել է Պատվիրատուի կողմից Պայմանագրի միակողմանի լուծմանը:

Այսպիսով, Բողոքներ քննող անձը գտնում է, որ Արման Ասմանգուլյան Ա/Ձ-ին՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար առկա են Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված հիմքը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի՝ 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով, 2-րդ մասով, 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 20.02.2019թ. թիվ 01.1/26-3/2580-19 գրությամբ Արման Ասմանգուլյան Ա/Ձ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը բավարարել:

2. Արման Ասմանգուլյան Ա/Ձ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ երկու տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝ **ԷՄԻԼ ՍԱՐԳՍՅԱՆ**